

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՏԿՏՏՆ-ՀՐՄԱՇՁԲ-2019/2Ծ**

**ք. Երևան**

**« 04 » հուլիսի 2019թ.**

«Ն» տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Մ.Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Մինասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Հ-6, Հ-2 - եղվարդի տր. հանգույց - Մ-1 վթարային տր. հանգույցի հիմնանորոգման աշխատանքներ (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են «Ն» օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2019թ.-ին իրականացվելիք աշխատանքների համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 15.12.2019թ, իսկ մնացած աշխատանքների համար՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 240 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ «Ն» օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե:

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 374 323 692 (երեք հարյուր յոթանասունչորս միլիոն երեք հարյուր քսաներեք հազար վեց հարյուր իննսուներկու ) ՀՀ դրամ, որից 62 387 282(վաթսուներկու միլիոն երեք հարյուր ութսունյոթ հազար երկու հարյուր ութսուներկու) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն, իսկ 2019 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 225 058 965 (երկու հարյուր քսանհինգ միլիոն հիսունութ հազար ինը հարյուր վաթսուհինգ ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է:

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է:

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է:

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է:

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՔԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այլփոփոխություններ:

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 25 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

«Ք.Երևան, Կառավարական տուն 3,

«Կենտրոնական գանձապետարան

ՀՀ ՀՀ 02578338

Հ/Հ 900011025815



Կ.Տ.

### Կ Ա Ս Ա Ր Ո Ղ

«Կամրջային երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան» ՓԲԸ

հասցե՝ ՀՀ ք. Երևան, Արարտյան 86

ՀՀ ՀՀ՝ 01800813

Բանկ՝ «ԱմերիաԲանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 1570005335450100



Կ.Տ.

Ստորագրություններ:

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ  
ՉԱՓԱԲԱԺԻՆ 1**

**Հ-6, Հ-2 - Եղվարդի տր. հանգույց - Մ-1 վթարային տր. հանգույցի հիմնանորոգման աշխատանքների  
(ԸՆԴՀԱՆՈՒՐ)**

ՀՀ հազ.

դրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
<b>I. Նախապատրաստական աշխատանքներ</b>					
1	Շին-մոնտաժային աշխատանքներ իրականացնելու ընթացքում տրանսպորտային միջոցների երթևեկությունը կարգավորող ճան. նշանների պատրաստում և տեղադրում՝ հետագա կազմատումով և վերադարձ 50%: Նախազգուշացնող-1.25 (8 հատ): Արգելիչ - 3.1 (4 հատ), 3.20 (4 հատ), 3.24 (12 հատ): Թեղադրող - 4.2.1 (4 հատ), 4.1.5 (4 հատ): Տեղեկատու - ցուցիչ - 6.8.1 (2 հատ), 6.17 (4 հատ), 6.18.2 (4 հատ):	հատ	46	32.800	1508.800
<b>I.Ընդամենը</b>					<b>1508.800</b>
<b>II. Գոյ. ունեցող ուղեանցի կազմադրում (մասնակի)</b>					
1	Բազրիքների ամրացման N8 շվեյների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը:	դր	0.634	30.180	19.134
2	Մայթերի ե/բետոնե բլոկների կազմատում, չափ.63x165x299 սմ, քաշը - 2.4 տ, բարձում ա/հնքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	33	18.900	623.700
3	Ուղեանցի երթևեկային մասի պաստառի բոլոր էլեմենտների կազմատում պնևմագործիքով, տեղափոխում 50մ հեռ. վրա և կույտավորում գրեյդերով: Բարձում ա/հնքնաթափ 0.65մ <sup>3</sup> շեր. տարողությամբ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա, h=15 սմ:	մ3	143.82	7.580	1090.156
4	Դեֆորմացիոն կարերի կազմատում, բարձումը ձեռքով ա/հնքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	դր	0.342	253.840	86.813
5	Երթևեկային մասի ե/բետոնե սալի կազմատում (վերհեծանային տեղամասեր) պնևմագործիքով, բեկորների կույտավորում և բարձումը ա/հնքնաթափ ձեռքով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	42	36.970	1552.740
6	Մայթատակ բետոնների կազմատում ձեռքով, բարձում ա/հնքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	11.38	36.970	420.719

7	Նույնը՝ հեծանների վերհենարանային տեղամասերի (NN2 և 3 միջանկյալ հենարանների վրա):	մ3	30.5	36.970	1127.585
8	Երթևեկային մասի հավաքովի ե/բետոնե սալերի ապամոնտաժում 5տ ք/բ ինքնազնաց ամբարձիչով. ա) Ս-1 չափ. 13x84x340 սմ, P <sub>1</sub> =0.93 տ, բ) Ս-2 չափ. 13x84x220 սմ, P <sub>1</sub> =0.6 տ, բարձումով ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	90.23	19.900	1795.577
9	Թռ. կառուցվածքների հավաքովի ե/բետոնե հեծանների ապամոնտաժում 25 տ ք/բ ինքնազնաց ամբարձիչով. եզրային թռիչքներ -- հեծաններ Ե-1 Չափ. 34(48)x60x1450 սմ, քաշ-8,9 տ: Վերադարձ սեփականատիրոջը:	հալք	36	83.580	3008.880
10	Թռ. կառուցվածքների հավաքովի ե/բետոնե հեծանների ապամոնտաժում 25 տ ք/բ ինքնազնաց ամբարձիչով. կենտրոնական թռիչքներ -- հեծաններ Ե-2 Չափ. 34(48)x60x2000 սմ, քաշ-12,3 տ: Վերադարձ սեփականատիրոջը:	հալք	18	138.770	2497.860
11	ՔՕԿ ՇՍ տիպի ռետինե-մետաղական հենարանային մասերի հեռացում, բարձումով ա/ինքնաթափ ձեռքով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա: Չափ. 40x250x500 մմ, 1 հատի քաշը -0.0125 տ:	հալք	36	0.596	21.456
12	Միջանկյալ հենարանների կազմատվող ե/բ կանգնակների կազմատում 6 մ երկարությամբ՝ ամրանների կտրումով: Բարձում ա/ինքնաթափ 0.65մ <sup>3</sup> շեր. տարողությամբ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	11.76	112.520	1323.235
13	Միջանկյալ հենարանների պահպանվող կանգնակների վերին տեղամասերի կազմատում ձեռքով h <sub>փք.</sub> =1.0 մ աշխատող ամրանների պահպանումով: Բարձում ա/ինքնաթափ 0.65մ <sup>3</sup> շեր. տարողությամբ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	1.68	112.520	189.034
14	Կցորդումների երթևեկային մասի ա/բետոնե ծածկի կազմատում պնևմագործիքով (անցումային սալերի տեղամասերում), տեղափոխում 25մ հեռ. վրա և կույտավորում գրեյդերով: Բարձում ա/ինքնաթափ 0.65մ <sup>3</sup> շեր. տարողությամբ էքսկավատորով և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	20	8.240	164.800
15	Անցումային սալերի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը: Չափ. 25x200x400 սմ:	մ3	44	15.740	692.560
16	Եզրային հենարանների վրա հողմնահարված բետոնե ենթաշերտի կազմատման աշխատանքներ ձեռքով, բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	5.4	31.470	169.938
17	Պահարանային պատերի վրա գտնվող բետոնի կազմատման աշխատանքներ ձեռքով, բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	0.6	29.700	17.820
18	Պահարանային պատերի եզրային տեղամասերի կազմատում ձեռքով՝ գոյ. ունեցող ամրանների պահպանումով, բարձում ա/ինքնաթափ և տեղափոխում լցակույտ 4 կմ հեռ. վրա:	մ3	0.2	29.700	5.940

19	Պահարանային պատերի վերին հատվածի բետոնի կազմատում (աճեցման համար):	մ3	0.19	29.700	5.643
20	Կենտրոնական թռիչքի կենտրոնում հեծանների տակ ՄՈՒՄ պողպատե կոնստրուկցիաների մոնտաժում - Շ.3: Հավաքում և կազմատում 1անգամ:	տ	6.344	230.240	1460.643
				<b>II.Ընդամենը</b>	<b>16274.232</b>
<b>III. Միջանկյալ հենարաններ</b>					
1	Միջանկյալ հենարանների հիմքերի սահմաններում փոսորակների փորման հողային աշխատանքներ էքս. 0.65 մ <sup>3</sup> շտ ձեռքով՝ կողքի կուտակումով - 10 eIV:	մ3	259.7	0.745	193.477
2	Նույնը՝ ձեռքով - 10 eIV:	մ3	140	5.400	756.000
3	Գոյ. ունեցող բաժակների վրա ուղահայած անքերի գայլիկոնում d40մմ, L1=200 մմ: Անցքերի լրացման էպօքսիդա-ցեմենտային շաղախ - 0.022 մ <sup>3</sup> :	հատ	104	1.260	131.040
4	Խարիսխների տեղադրում գայլիկոնված անցքերի մեջ Ø16A500c, L1=400 մմ:	տ	0.66	64.030	42.260
5	Միջանկյալ հենարանների հիմքերի ուժեղացման միաձույլ ե/բ-B25 F200: Ամրան 8A240 - 0.469 տ 12A500c - 0.3268 տ 16A500c - 6.476 տ 32A500c - 5.047 տ	մ3	263.9	121.880	32164.132
6	Միաձույլ ե/բետոնե կանգնակների իրականացում-B25, F200: Ամրան 8A240 - 1.075 տ 10A500c - 6.458 տ 14A500c - 4.365 տ 32A500c - 37.23 տ	մ3	103.67	351.510	36441.042
7	Միաձույլ ե/բետոնե ռիզելների իրականացում - B25, F200: 6.5A240 - 0.00252 տ 8A240 - 3.551 տ 12A500c - 0.04476 տ 14A500c - 0.1265 տ 16A500c - 0.495 տ 25A500c - 11.579 տ Եռակցում հալեցված մետաղով (ванным способом) մինչև "25 -160 հատ	մ3	70.74	244.900	17324.226
8	Հենարանային պատվանդանների միաձույլ ե/բետոն 8A240 - 0.093 տ 16A500c - 0.1375 տ	մ3	2.04	187.980	383.479
9	Հակասեյսմիկ կոնստրուկցիաների միաձույլ ե/բետոն 10A500c - 0.052 տ 16A500c - 0.1512 տ	մ3	4.84	146.540	709.254
10	Պատվանդանների վրա ՆԴ տեղադրում (ուղեանցի համար) -20x260x370 - 102 հատ 16A500c - 96.7 կգ; սահմանափակիչներ - 10A240 - 68.5 կգ:	տ	1.706	905.070	1544.049

11	Հիմքի և կանգնակների գրունտի հետ շփվող մակերևույթների քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով:	մ2	329.4	1.362	448.643
12	Փոստրակների հետլիցք բուլդոզերով պահեստավորված գրունտով: Գրունտի տեղադրումը շերտերով ջրի լցաբախշումով և խտացում պնևմատոփանով:	մ3	110	1.085	119.350
13	Նույնը ձեռքով:	մ3	14.4	1.570	22.608
14	Կանգնակների ուղղահայած գծանշում:	մ2	176.4	0.740	130.536
15	Պողպատե արգելափակոցների տեղադրում NN2 և 3 հենարանների դիմաց:	զմ	88	24.790	2181.520
<b>III. Ընդամենը</b>					<b>92591.615</b>
<b>IV. Եզրային հենարաններ</b>					
1	Հենարանների կողային վահանների իրականացման համար հորիզոնական անցքերի գայլիկոնում. "40 մմ L1=0.2 մ	հատ	24	1.920	46.080
2	Նույնը ուղահայած անցքերի գայլիկոնում. "40 մմ L1=0.2 մ	հատ	32	1.260	40.320
3	Հենարանների կողային վահանների իրականացման միաձույլ ե/բետոն: Ամրան 16A500c P=0,383 տ, 12A500c P=0,354 տ,	մ3	7.92	145.770	1154.498
4	Պահարանային պատի վրա ուղահայած անցքերի գայլիկոնում Ø 40 մմ L1=0.2 մ	հատ	68	1.260	85.680
5	Խարիսխների տեղադրում գայլիկոնված անցքերի մեջ: Անցքերի լրացման էպօքսիդա-ցեմենտային շաղախ - 0.015 մ3:	տ	0.027	650.890	17.574
6	Պահարանային պատի աճեցման միաձույլ ե/բետոն: 8A240 - 0.0026 տ 10A500c - 0.0736 տ 12A500c - 0.0732 տ 22A500c - 0.04774 տ	մ3	2.52	138.660	349.423
7	Ռիզելի վրա անցքերի իրականացում d=40մմ (L1=0,2մ) հետագայում հենարանային և հակասեյսմիկ պատվանդանների ձողերի տեղադրման նպատակով:	հատ	168	1.260	211.680
8	Անցքերի լրացում էպօքսիդա-ցեմենտային շաղախով:	մ3	0.036	48.100	1.732
9	Հենարանների հենարանային պատվանդանների միաձույլ ե/բետոն: Ø16 A500c - 0.06854 տ, Ø8A240 - 0.162 տ:	մ3	2.5	154.840	387.100
10	Հակասեյսմիկ կոնստրուկցիաների միաձույլ ե/բետոն 10A500c - 0.027 տ 16A500c - 0.011 տ	մ3	1.76	110.770	194.955
